

Գենդերային հավասարություն. Հակիրճ տեղեկատվական գրքույկ

Գենդերային հավասարության մասին այս գրքույկը նպատակ ունի ընդհանուր տեղեկատվություն տրամադրել գենդերային հարցերի և գենդերային հավասարության, ինչպես նաև կանանց իրավունքների պաշտպանության ու ամրապնդման ազգային և միջազգային իրավական դաշտի և մեխանիզմների մասին: Գրքույկը հասցեագրվում է պետական և տեղական կառավարման մարմիններում քաղաքականություն մշակողներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, գենդերային հարցերով զբաղվող ակտիվիստներին, հետազոտողներին, ինչպես նաև կանանց ու տղամարդկանց հավասարության հարցերով բոլոր հետաքրքրվողներին: Գրքույկը նպատակաուղղված է գենդերային հարցերի մասին իրազեկության բարձրացմանը:

Գենդերային հավասարությունը ինքնանպատակ չէ: Այն տղբատության հաղթահարման, կայուն զարգացման և պատշաճ կառավարման խնդիրները լուծելու նախապայման է:

Քոֆի Անան,
ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ իրականացվող ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) «Գենդերը և քաղաքականությունը Հարավային Կովկասում» ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանում գենդերային քաղաքականության իրականացմանը սատարելուն, երկրի քաղաքական, սոցիալական և տնտեսական կյանքում կանանց մասնակցությունն ապահովելու նպատակով կանանց կարողությունները զարգացնելուն և գենդերային հարցերի շուրջ երկխոսություն խթանելուն: ՄԱՉԾ-Հայաստանյան և Վրաստանյան գրասենյակների կողմից իրականացվող այս ծրագիրը նաև նպատակ ունի

խթանել տեղեկատվության փոխանակումն ու համագործակցությունը տարածաշրջանում:

**Գենդերային իրավահավասարության
ապահովումը ՄԱՉԾ-ի հիմնական
առաքելություններից մեկն է: Ինչու՞**

- Որովհետև կանանց և տղամարդկանց միջև հավասարությունն արդար է և հիմնավորված:
- Որովհետև այն ընկած է մարդկային զարգացման և մարդու իրավունքների հիմքում:
- Որովհետև գենդերային իրավահավասարության բացակայությունը խոչընդոտում է առաջընթացը և մարդկային զարգացումը:

ՄԱՉԾ-ի գենդերային հայեցակարգ

Հարցեր և պատասխաններ

1. Ի՞նչ է գենդերը և ինչու՞վ է այն տարբերվում սեռից:

Գենդերը հաճախ շփոթում են **սեռի հետ**, մինչդեռ վերջինս կենսաբանական կատեգորիա է, կրում է համընդհանուր և անփոփոխ բնույթ և տրվում է բնության կողմից:

Գենդերը չի վերաբերվում տղամարդկանց և կանանց միջև կենսաբանական տարբերություններին: Այն վերաբերվում է տվյալ հասարակության և մշակույթի պայմաններում կնոջն ու տղամարդուն վերագրվող սոցիալական դերերին, պարտականություններին և վարքագծին: Գենդերային դերերը ձեռքբերվի են և հաճախ հիմնվում են կանանց և տղամարդկանց վարքագծի վերաբերյալ առկա կարծրատիպերի վրա: Այլ կերպ ասած, գենդերը սոցիալական կառուցվածքի արգասիք է, իսկ գենդերային դերերը դիմամիկ բնույթ ունեն ու ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել¹:

2. Ի՞նչ է գենդերային հավասարությունը և ինչ՞ու է այն կարևոր

Հավասարությունը մարդու հիմնարար և կարևորագույն իրավունք է: Այն ամրագրված է մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր միջազգային համաձայնագրերում:

Հակառակ տիրող կարծիքների, **գենդերային հավասարությունը** չի վերաբերվում միայն կանանց: Բացառապես միայն կանանց կամ միայն տղամարդկանց հարցերի վրա կենտրոնանալու փոխարեն, գենդերային հավասարությունն առնչվում է թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց անհավասարության դրսևորումներին:

Գենդերային հավասարությունը ենթադրում է կանանց և տղամարդկանց հավասար պայմանների ապահովում՝ իրենց իրավունքներից օգտվելու համար: Այն նաև նպատակ ունի կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորություններ տրամադրել՝ հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը մասնակցելու և այդ զարգացման արդյունքներից հավասարապես օգտվելու առումով: Գենդերային հավասարությունը չի նշանակում, որ կանայք և տղամարդիկ պետք է նույնանան, այլ նշանակում է, որ իրենց հնարավորությունները պետք է հավասար լինեն²:

Ո՞րն է գենդերային հավասարության անհրաժեշտությունը:

Հահավասարությունը մարդկային զարգացման կարևորագույն նախադրյալներից է: Առանց հասարակության բոլոր ոլորտներում և մակարդակներում կանանց ներկայացուցչական ներկայության, անհնար է ապահովել միջոցների արդար բաշխումը: Որոշումների կայացման բարձր մակարդակներում իրենց շահերը ներկայացնելու կանանց անկարողությունը հանգեցնում է այն բանին, որ բազում կարևոր հարցեր մնում են չլուծված: Քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց բացակայությունը հասարակության զգալի մասին թույլ չի

տալիս օգտվել քաղաքական, սոցիալական և տնտեսական ոլորտների քաղաքականությանը մասնակցելու իրենց իրավունքից:

3. Ո՞րն է կանանց իրավունքների պաշտպանության և խթանման գործիքների կարևորությունը:

Օրենքով ամրագրված կամ փաստացի անհավասարությունից կանայք տուժում են գրեթե բոլոր հասարակություններում և գործունեության ոլորտներում: Այս իրավիճակի առաջացման և վատթարացման պատճառները պետք է փնտրել ընտանիքում, համայնքում և աշխատավայրում առկա խտրականության մեջ: Մինչդեռ խտրականության պատճառներն ու հետևանքները տարբեր երկրներում տարբեր են, այդ երևույթը համատարած բնույթ ունի:

Աշխարհում կանանց իրական իրավիճակը փաստագրելու ՄԱԿ-ի կողմից իրականացվող ջանքերի շնորհիվ հավաքագրվեց անհանգստացնող մի վիճակագրություն կանանց և տղամարդկանց միջև առկա տնտեսական և սոցիալական անհավասարության վերաբերյալ: Աղքատության մեջ ապրող 1,3 միլիարդ բնակչության 70 տոկոսը կանայք են: Կանանց աճող աղքատության պատճառներն ուղղակիորեն կապված են աշխատաշուկայում իրենց անհավասար դիրքի, սոցապահովության համակարգի և ընտանիքում իրենց ձայնի իրավունքի և կարգավիճակի հետ: Աշխարհի գրեթե բոլոր մասերում կանայք տղամարդկանցից շատ են աշխատում, բայց իրենց աշխատանքի զգալի մասը չի վարձատրվում և չի գնահատվում: Տնտեսական և քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցությունը շարունակում է մնալ խիստ սահմանափակ : Կանայք զբաղեցնում են պատգամավորական տեղերի ընդամենը 10 տոկոսը և պետությունների ղեկավարների պաշտոնների 5 տոկոսից ավելի քիչ: Կանանց ցածր կարգավիճակի առավել ցայտուն դրսևորումները տեղ են գտել շատ երկրների օրենսդրությամբ ամրագրված խտրականության մեջ՝ սեփականության,

ամուսնության ու սպահարգանի, քաղաքացիության ընդունման և զբաղվածության իրավունքների առումով³:

Այս ամենը առաջացրել է կանանց իրավունքները պաշտպանող միջազգային իրավական լծակների անհրաժեշտությունը:

4. Որո՞նք են կանանց իրավունքները պաշտպանող միջազգային գործիքները ու մեխանիզմները:

Կանանց իրավահավասարությունը Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքներից է: ՄԱԿ-ի Կանոնադրությունը որպես հիմնական նպատակ նշում է՝ «վերահաստատել հավատը մարդու հիմնարար իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ հավասար իրավունքների նկատմամբ»: Կանանց իրավահավասարության վերաբերյալ ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթներն իրենց զարգացումը գտան մարդու իրավունքների վերաբերյալ բազում միջազգային փաստաթղթերում:

Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան (CEDAW) (1979 թ.), որը հաճախ անվանում են «Կանանց իրավունքների միջազգային բիլ», կանանց իրավունքների վերաբերյալ առավել ընդգրկուն միջազգային իրավական փաստաթուղթն է: Կոնվենցիան մատնանշում է բազմաթիվ ոլորտներ, որտեղ կանանց նկատմամբ խտրականությունն առավել ցայտուն դրսևորումներ է ունեցել՝ օրինակ, քաղաքական իրավունքները, ամուսնությունը, ընտանիքը և զբաղվածությունը: Կոնվենցիան սահմանում է հստակ նպատակներ և միջոցներ, որոնց իրագործմամբ կստեղծվի այնպիսի միջազգային հասարակարգ, որտեղ կանայք կօգտվեն տղամարդկանց հետ հավասար իրավունքներից: 2000 թ. դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտավ **Կոնվենցիայի ֆակուլտատիվ արձանագրությունը:** Արձանագրությունը պարտավորեց Կանանց դեմ

խտրականության վերացման հանձնաժողովին⁴ ընդունել անհատական կամ խմբակային բողոքներ այն կանանցից, որոնք սպառել են իրենց երկրում դատական կարգով իրենց խնդիրները լուծելու հնարավորությունը: Արձանագրությունը նաև իրավունք է տալիս հանձնաժողովին քննել Կոնվենցիայի դրույթները կոպիտ կամ շարունակական կերպով խախտելու դեպքերը: Այս գործողությունները, սակայն, կարող են իրականացվել միայն Արձանագրությունը վավերացրած պետություններում:

Հայաստանի Հանրապետությունը միացավ CEDAW-ին 1993 թ.-ին, իսկ ֆակուլտատիվ արձանագրությունը գտնվում է վավերացման փուլում:

Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան (1952 թ.) ամրագրում է հասարակության քաղաքական կյանքում տղամարդկանց հետ հավասար կանանց մասնակցության իրավունքը, ներառյալ ընտրովի պաշտոններում ընտրվելու, պաշտոնավարելու և պետական կառավարման գործառույթներ իրականացնելու իրավունքը: *Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիային դեռ չի միացել:*

Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Կոնվենցիաները ԱՄԿ Կոնվենցիաներն ընդգրկում են սոցիալական և աշխատանքային հարցերի լայն շրջանակ, ներառյալ մարդու հիմնական իրավունքները, նվազագույն աշխատավարձը, արտադրական հարաբերությունները, զբաղվածության քաղաքականությունը և սոցիալական երկխոսությունը: Այս հարցերի թվին են պատկանում նաև մի շարք գենդերային բնույթի խնդիրներ:

Հաճախ օգտագործվում է այն փաստարկը, որ կանանց նկատմամբ պաշտպանողական միջոցառումների իրականացումը կարող է բացասաբար անդրադառնալ հենց իրենց՝ կանանց վրա, զրկելով իրենց որոշակի աշխատանքներ ձեռք բերելու հնարավորությունից: Մայրության հետ կապված արտոնությունները բարձրացնում են կանանց աշխատանքի ընդունելու հետ կապված ծախսերը և, հետևաբար, կարող են ետ պահել գործատուներին կանանց

աշխատանքի ընդունելուց: Սակայն մայրության պաշտպանության դեպքում, այս միջոցառումներն անհրաժեշտ են՝ կնոջ վերաբարտադրողական դերի պաշտպանության առումով: Ահա թե ինչու Մայրության պաշտպանության մասին վերանայված Կոնվենցիան շեշտադրում է սոցիալական ապահովության միջոցներից մայրության նպաստների վճարման անհրաժեշտությունը և սահմանափակում այն հանգամանքները, որոնց դեպքում գործատուները ստիպված են վճարել այդ նպաստները իրենց սեփական միջոցներից (Կոնվենցիա 183, հոդված 6):

Ստորև բերված է գենդերային հարցերով Կոնվենցիաների ոչ սպառիչ ցանկը.

- *Մայրության պաշտպանության մասին Կոնվենցիա*
- *Կանանց գիշերային աշխատանքի մասին Կոնվենցիա*
- *Հավասար վարձատրության մասին Կոնվենցիա*
- *Խտրականության (աշխատանքի և զբաղմունքների բանգավառ) մասին Կոնվենցիա*
- *Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների մասին Կոնվենցիա*
- *Կես դրույքով աշխատանքի մասին Կոնվենցիա*
- *Տնայնագործ աշխատանքի մասին Կոնվենցիա*

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է աշխատաշուկայում կանանց իրավահավասարությանը առնչվող ԱՄԿ Կոնվենցիաներից միայն երկուսը՝ *Հավասար վարձատրության և Խտրականության (աշխատանքի և զբաղմունքների բանգավառ) մասին Կոնվենցիաները*:

Նշում: Կարևոր է նշել այն փաստը, որ մարդու իրավունքների և աշխատանքի վերաբերյալ հատուկ պայմանագրերը իրավական փաստաթղթեր են: Անդամակցելով այդ պայմանագրերից որևէ մեկին, պետությունը պարտավորվում է երաշխավորել իր տարածքում բնակվող, առանց բացառության, բոլոր անհատների՝ պայմանագրով ամրագրված իրավունքները,

իսկ իրավունքների ոտնահարման դեպքում՝ դատական կարգով դրանց վերականգնումը:

ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակները (ՀՁՆ), 2000թ.

ՀՁՆ-ն ներառում են 8 փոխկապակցված նպատակներ և 18 ժամկետային նպատակակետեր, որոնց իրագործման պարագայում աշխարհի առավել աղքատ բնակչությունը հնարավորություն կստանա օգտվել գլոբալիզացման առավելություններից: Նպատակների իրականացման շրջանակներում ջանքեր են գործադրվում զարգացող պետությունների առաջ ծառայած առավել լուրջ հարցերի լուծման միջոցով մինչև 2015 թ. իրական առաջընթացը խթանելու ուղղությամբ:

Հազարամյակի զարգացման նպատակներից երրորդն ուղղված է գենդերային հավասարության խթանմանը և կանանց հզորացմանը: Այս նպատակի առկայությունն իսկ վկայում է այն մասին, որ միջազգային հանրությունն ընդունել է զարգացման առումով գենդերային հավասարության և կանանց դերի բարձրացման կարևորությունը: Հազարամյակի զարգացման երրորդ նպատակը ներխուժված է բոլոր 8 նպատակներին, քանի որ գենդերային անհավասարությունը մեծապես խոչընդոտում է մնացյալ նպատակների իրականացումը: Գործնականում, այս նպատակների իրագործումն անհնար է առանց կարողությունների և հնարավորությունների առումով կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը վերացնելու:

Կանանց հարցերով 4րդ միջազգային համաժողովի կողմից ընդունված Պեկինյան հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը (1995թ.)

Գործողությունների ծրագիրը կանանց դերի բարձրացման օրակարգային փաստաթուղթ է, որը նպատակ ունի վերացնել տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական ասպարեզներում որոշումների կայացմանը մասնակցելու միջոցով հանրային և մասնավոր կյանքում կանանց լիարժեք մասնակցությունը խոչընդոտող բոլոր գործոնները: Սա նշանակում է, որ

կանանց և տղամարդկանց միջև պետք է համատեղ իշխանության և պարտականությունների սկզբունք սահմանվի, որը կգործի ընտանիքում, աշխատավայրում, ներպետական ու միջազգային համատեքստում:

5. Որո՞նք են կանանց իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմները

Հայաստանի Հանրապետությունում 1997 թ. ստեղծվեց կանանց հարցերով լիազորված մարմին՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների վարչության կանանց հարցերով բաժինը:

2000 թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ Վարչապետի ընդունած որոշմամբ ՀՀ Կառավարությանը կից ստեղծվեց Կանանց հիմնահարցերի խորհուրդ: Կամավորական սկզբունքներով ստեղծված խորհրդակցական այս մարմնին անդամակցում են ՀՀ տարբեր նախարարությունների պաշտոնատար անձինք, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ, պետական կառույցների և մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչներ:

ՀՀ-ում կանանց իրավունքների ապահովման ուղղությամբ թեև ամենակարևոր քայլը «ՀՀ-ում կանանց իրավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004 - 2010 թթ. գործողությունների ազգային ծրագրի» (ԱԾ) ընդունումն էր, որը տեղի ունեցավ 2004 թ. ապրիլին: Ազգային ծրագիրն ամրագրում է Հայաստանի Հանրապետությունում կանանց վերաբերյալ քաղաքականության սկզբունքները, գերակայություններն ու ուղղությունները և ուղղված է կանանց առջև ծառայած սոցիալ-տնտեսական հարցերի լուծմանը և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը:

Ազգային ծրագիրը բաղկացած է հետևյալ 8 բաժիններից.

- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովումը որոշումների կայացման մակարդակում և հասարակական, քաղաքական ոլորտներում
- Կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում,
- Կրթության ոլորտ,
- Կանանց առողջական վիճակի բարելավում,
- Կնոջ նկատմամբ բռնության երևույթի վերացում ,
- Կանանց և աղջիկների նկատմամբ թրաֆիքինգի երևույթի վերացում
- ՉԼՄ-ների և մշակութային հաստատությունների դերը կանանց հարցերի լուսաբանման և կնոջ ընդօրինակելի կերպարի ձևավորման գործում
- Ինստիտուցիոնալ բարեփոխումներ

Ազգային ծրագրի իրագործման նպատակով ՀՀ շահագրգիռ նախարարությունների փոխնախարարներ, ՀՀ Կառավարությանն առընթեր մարմինների ներկայացուցիչներ և փոխմարզպետներ նշանակվել են ԱԾ պատասխանատուներ:

ՀՀ օրենսդրությունը, այդ թվում՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը և ՀՀ քաղաքացիության մասին օրենքը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք ամրագրում են կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը աշխատանքի, զբաղվածության, վարձատրության, ընտանիքի և այլ ոլորտներում: Հայաստանը, սակայն, չունի հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին հատուկ օրենք, որը կսահմաներ հանրային և մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում և մակարդակներում սեռերի իրավահավասարության և հավասար իրավունքների ընդհանուր շրջանակը:

6. Արդյո՞ք գենդերային անհավասարությունը առկա է հայկական հասարակությունում

Իրավական տեսանկյունից Հայաստանի կանայք պաշտպանված են խտրականությունից: ՀՀ օրենսդրությունը կառուցված է իրավահավասարության սկզբունքի վրա, և իրավահավասարությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ: Հայաստանի կողմից վավերացված կանանց իրավունքների վերաբերյալ մի շարք միջազգային կոնվենցիաները գերակայում են ազգային օրենսդրության դրույթների նկատմամբ: Սակայն անհրաժեշտ է ապահովել, որ այդ իրավահավասարությունը չլինի սոսկ թղթի վրա, այլ վերածվի իրականության: Դաստիարակության, մշակույթի, շրջապատի, ուժային կառույցների դասավորության միջոցով ստեղծված կարծրատիպային գենդերային մոդելը գործում է թե՛ անձնական և թե՛ հասարակության մակարդակով, և կանայք ու տղամարդիկ, երբեմն անգիտակցաբար, պահպանում են այս իրողությունը:

Հայաստանում մեծ են անելիքները քաղաքական ոլորտում կանանց մասնակցությունը և ներկայացվածությունը ապահովելու առումով: Իշխանության բոլոր թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական, որոշումների կայացման մակարդակում կանանց թիվը չնչին է: Կանայք կազմում են ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների թվի ընդամենը 7 տոկոսը: Նույն իրավիճակն է նաև գործադիր մարմիններում՝ ընդամենը 1 կին նախարար և 3 կին փոխնախարարներ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում: Մեծ են տարբերությունները նաև գործունեության տարբեր ոլորտներին կանանց և տղամարդկանց տրամադրած ժամանակի առումով: Հայաստանի կանայք եկամտաբեր (վարձատրվող) գործունեությամբ զբաղվում են միջին հաշվով օրական 1 ժամ 44 րոպե, մինչդեռ տղամարդկանց դեպքում այս ժամանակը կազմում է 5 ժամ 18 րոպե: Մեծ է տարբերությունը նաև տնային

(չվարձատրվող) աշխատանքի առումով. կանայք, միջին հաշվով, այս աշխատանքին հատկացնում են օրական մոտ 6 ժամ, իսկ տղամարդիկ՝ 1 ժամ 45 րոպե⁵:

7. Ի՞նչ է գենդերային բռնությունը

Կանանց նկատմամբ բռնությունը իրենց հիմնական իրավունքների և ազատությունների ոտնահարում է, որը սահմանափակում կամ զրկում է կանանց այդ իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորությունից⁶:

Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին ՄԱԿ-ի Հռչակագրի համաձայն, «կանանց նկատմամբ բռնությունը» սահմանվում է, որպես «գենդերային բռնության ցանկացած դրսևորում, որը բերում է կամ կարող է բերել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի, այդ թվում՝ բռնության սպառնալիքի և հարկադրանքի կերպով կնոջ ազատությունը սահմանափակելը՝ թե՛ հանրային և թե՛ անձնական կյանքում»:

Աշխարհի բոլոր հասարակություններում կանայք և աղջիկները ենթարկվում են ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունների: Բռնության խնդիրը չի ճանաչում որևէ մշակութային, սոցիալական, դասակարգային, տնտեսական կամ կրոնական սահմաններ: Ելնելով գենդերային բռնության խնդրի համաշխարհային բնույթից՝ այն դարձել է բոլոր պետությունների մտահոգության առարկան: Բռնության մեկ այլ դրսևորման՝ կանանց և աղջիկների թրաֆիքինգի, դեմ արդյունավետ պայքարը դարձել է հրատապ խնդիր:

ՄԱԿ-ի Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների, թրաֆիքինգը (շահագործման նպատակով մարդկանց ապօրինի տեղափոխում և առք ու վաճառք) կանխելու, արգելելու և պատժելու մասին 2000թ. արձանագրությունը կոչված է հասցեագրելու այդ խնդիրը:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և շատ այլ երկրներում, ընտանեկան բռնությունը մասնավոր խնդիր է համարվում. հետևաբար, հիմնականում չի հրապարակվում և չի լուսաբանվում: Մինչդեռ, որոշ ՀԿ-ների կատարած

ուսումնասիրությունների արդյունքները անհանգստության տեղիք են տալիս: Բռնությունը սովորաբար ընկալվում է որպես սոսկ ֆիզիկական ուժի գործադրում, սակայն երևույթը շատ անգամ ավելի լայնընդգրկում է: Հոգեբանական բռնությունը, ֆիզիկականի և սեռականի համեմատությամբ, շատ ավելի տարածված է:

Կանանց համար իրավաբանական խորհրդատվության, օգնության և պաշտպանվածության անմատչելիությունը, բռնության ենթարկվող կանանց և աղջիկների նկատմամբ խախտումները պատժելու իրավապահ մարմինների թերացումները թույլ չեն տալիս վերջ տալ այս երևույթին:

8. Որտե՞ղ դիմել, եթե իմ իրավունքները ռոտնահարվում են

Գրքույկը չի հավակնում սպառնիչ խորհրդատվություն տրամադրել ռոտնահարված իրավունքների վերականգնման և մեղավորների պատժման մեխանիզմների վերաբերյալ:

Սակայն, եթե Ձեր իրավունքները ռոտնահարվել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից, կարող եք բողոք-դիմում ներկայացնել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հասցեն է. Երևան, 375019, Պոռոշյան փ. 12, հեռ.՝ 262 694, 268 581, 267 688 էլ-փոստ՝ ombuds@ombuds.am

CEDAW Կոնվենցիայի ֆակուլտատիվ արձանագրությունը (այժմ գտնվում է վավերացման ընթացքում) հնարավորություն է ընձեռում այն անձանց, որոնք սպառել են իրենց երկրում դատական կարգով իրենց խնդիրները լուծելու հնարավորությունը անհատական կամ խմբակային բողոքներով դիմել Կանանց դեմ խտրականության վերացման հանձնաժողովին:

Բողոք դիմումներ ներկայացնելու ուղեցույցը ձեռք բերելու համար, այցելել

հետևյալ վեբ կայքը՝ <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/proTOCOL/modelform-E.PDF>

Բողոք դիմումները ուղարկվում են հետևյալ հասցեով՝

*Committee on the Elimination of Discrimination against Women
c/o Division for the Advancement of Women,
Department of Economic and Social Affairs
United Nations Secretariat
2 United Nations Plaza
DC-2/12th Floor
New York, NY 10017
United States of America*

ֆաքս՝ 1-212-963-3463

Ծանոթություն

¹ՄԱԶԾ-ի գեներային վերլուծությունների ուսումնական ձեռնարկ <http://www.undp.org/gender/resources/Gender%20Mainstreaming%20Training%20Module.pdf>

²Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Զարգացման աջակցության հանձնաժողովի Զարգացման համագործակցության ոլորտում Գեներային հավասարության և կանանց հորացման ուղեցույց, 1999

³Կանանց իրավունքները՝ համընդհանուր պատասխանատվություն, ընդհանուր տեղեկատվական փաթեթ2 <http://www.unhcr.ch/html/50th/50kit2.htm>

⁴ Կանանց դեմ խտրականության երևույթի վերացման հանձնաժողովը փորձագետ մարմին է, որը պատասխանատու է CEDAW-ի պարտավորվածությունների իրականացմանը ուղղված ազգային միջոցառումների մոնիթորինգի համար:

⁵ Հայաստանի Ժամանակի օգտագործման փորձնական հետազոտություն, ՀՀ ԱՎԾ, Երևան 2005

⁶ Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին ՄԱԿ-ի Հռչակագիր

Այլ աղբյուրներ

Կանանց հարցերով 4րդ միջազգային հանաժողով, գործողությունների ծրագիր Բաժին D՝ Կանանց դեմ բռնության երևույթ

Գեներային և կանանց առաջխաղացման հարցերով հասուկ խորհրդատուի գրասենյակ

Հասկացություններ և սահմանումներ
<http://www.un.org/womenwatch/osagi/conceptsandefinitions.htm>

Գենդերային հարցերի և կանանց դերի բարձրացման գծով հատուկ խորհրդականի գրասենյակ, Հասկացություններ և սահմանումներ
<http://www.un.org/womenwatch/osagi/gendermainstreaming.htm>

Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների, քաֆիֆինգը կանխելու, արգելելու և պատժելու մասին արձանագրություն, հավելում է Սիջազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիա, 2000 թ.

Կանանց դեմ բռնությունը վերացնելու մասին ՄԱԿ-ի հռչակագիր, 1993 թ.

Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (CEDAW)

UN CEDAW Ընդհանուր հանձնարարական 19

ՄԱԶԾ-ի գենդերային քաղաքականության հայեցակարգ
<http://www.undp.org/gender/policy.htm>

ՄԱԶԾ-ի գենդերային վերլուծությունների ուսումնական ձեռնարկ
<http://www.undp.org/gender/resources/Gender%20Mainstreaming%20Training%20Module.pdf>

Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր

Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական գրքույկ, ՀՀ ԱՎԾ և ՄԱԶԾ, Երևան, 2005 թ.